Հ Ո Ւ Շ Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ԸՆՏԱՆԻՔԻ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը և Ուկրաինայի ընտանիքի, երիտասարդության և սպորտի հարցերի նախարարությունը, այսուհետ՝ Կողմեր,

հիմնվելով երկու երկրների ժողովուրդների միջև բարեկամական կապերն ամրապնդելու և զարգացնելու ընդհանուր ցանկության վրա,

վստահություն հայտնելով, որ երիտասարդական քաղաքականության բնագավառում երկկողմ հարաբերությունների և համագործակցության ստեղծումը նպաստում է Ուկրաինայի և Հայաստանի Հանրապետության երիտասարդ սերունդների ներկայացուցիչների միջև փոխըմբռնման զարգացմանը,

հիմնվելով 1996 թվականի մայիսի 14-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ուկրաինայի Կառավարության միջև մշակույթի ոլորտում համագործակցության մասին» համաձայնագրի վրա,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Կողմերը, փոխադարձության սկզբունքով, կնպաստեն երկու պետությունների երիտասարդների միջև բարեկամական կապերի զարգացմանը՝ մասնավորապես կազմակերպելով հանդիպումներ, փոխանակումներ և ամրապնդելով համագործակցությունը երիտասարդական քաղաքականության բնագավառում:

Կողմերը կաջակցեն նաև երիտասարդական քաղաքականության բնագավառում համագործակցության հաստատմանը երիտասարդական քաղաքականության հարցերով զբաղվող գործադիր իշխանության մարմինների, ինչպես նաև այդ բնագավառում գործող հասարակական կազմակերպությունների (այսուհետ՝ գործընկեր կազմակերպություններ) միջոցով:

Հոդված 2

Կողմերը կխրախուսեն ուղղակի կապերի զարգացումը բոլոր մակարդակներում, այդ թվում՝ պատվիրակությունների փոխայցելությունները և տեղեկատվության փոխշահավետ փոխանակումները այն կազմակերպությունների միջև, որոնց միջպետական համագործակցության

մակարդակը համապատասխանում է սույն Հուշագրի նպատակներին: Համագործակցող կազմակերպությունների միջև ուղղակի կապերի հաստատման դեպքում կիրականացվեն համատեղ ծրագրեր: Իրականացնող կազմակերպությունները պատասխանատու են ծրագրերի իրագործման հետ կապված պարտականությունների կատարման համար:

Հոդված 3

Կողմերը կնպաստեն երիտասարդության խնդիրներն ուսումնասիրող հետազոտական հաստատությունների և կենտրոնների միջև ուղղակի կապերի զարգացմանը՝ ներառյալ պատվիրակությունների փոխայցելությունները և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվության փոխանակումները:

Հոդված 4

Կողմերը բարենպաստ պայմաններ կստեղծեն երիտասարդության զբոսաշրջության, երիտասարդների ամառային հանգստի կազմակերպման, արձակուրդների ընթացքում դպրոցական և ուսանողական խմբերի փոխանակումների համար՝ ներառյալ ամառային ճամբարների, տուրիստական-զվարճալի և կրթամշակութային շրջագայությունների կազմակերպումը:

Հոդված 5

Կողմերը կնպաստեն մասնակցությանը երիտասարդական փառատոներին, խորհրդաժողովներին, գիտաժողովներին, աշխատանքային ժողովներին, ցուցահանդեսներին, հանդիպումներին, ֆորումներին, մրցույթներին և այլ միջոցառումներին, ինչպես նաև երիտասարդական քաղաքականության բնագավառի մասնագետների միջև փորձի փոխանակումներին:

Հոդված 6

Կողմերը կխթանեն երիտասարդության զբաղվածության և մասնագիտական ուսումնական ծրագրերի համատեղ զարգացումն ու իրականացումը:

Հոդված 7

Կողմերը կապահովեն փոխգործակցությունը երիտասարդական քաղաքականության իրականացման համար պատասխանատու անձանց մասնագիտական ուսուցումն ու վերապատրաստումը:

Հոդված 8

Կողմերը բազմակողմանի աջակցություն կցուցաբերեն մյուս Կողմի պետության տարածքում գտնվող երիտասարդական խմբերին և Կողմերի

ներկայացուցիչներին:

Հոդված 9

Կողմերը կապահովեն իրենց երկրներում գործող երիտասարդական կազմակերպությունների և շարժումների վերաբերյալ տեղեկատվության փոխանակումը:

Հոդված 10

Սույն Հուշագրի կիրարկման նպատակով Կողմերը իրենց հավասար թվով ներկայացուցիչներից կստեղծեն հայ-ուկրաինական համատեղ հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով), որի նիստերը հաջորդաբար կգումարվեն Ուկրաինայում և Հայաստանի Հանրապետությունում՝ առնվազն 2 տարին մեկ անգամ: Հանձնաժողովը որոշումներ կընդունի սույն Հուշագրի կիրարկման վերաբերյալ: Հանձնաժողովը կմշակի համագործակցության ծրագրերի մանրամասները, ինչպես նաև այդ ծրագրերի ֆինանսական պայմանները:

Հոդված 11

Սույն Հուշագրում ընդգրկված բոլոր տեսակի աշխատանքները կհամաձայնեցվեն և կիրականացվեն Կողմերի պետությունների ազգային օրենքներին համապատասխան և կֆինանսավորվեն Կողմերի պետությունների պետական բյուջեով Կողմերին հատկացված ֆինանսավորման սահմաններում, ինչպես նաև Կողմերի օրենքներով չարգելված այլ աղբյուրներից:

Հոդված 12

Սույն Հուշագրի դրույթները չեն կարող ազդել Կողմերի իրավունքների և պարտականությունների վրա, որոնք բխում են այլ միջազգային պայմանագրերից, որոնց կողմ են հանդիսանում Կողմերը:

Հոդված 13

Սույն Հուշագրի դրույթների մեկնաբանման կամ կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

Հոդված 14

Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ և փոխադարձ համաձայնությամբ սույն Հուշագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք կձևակերպվեն առանձին արձանագրություններով և կհանդիսանան սույն Հուշագրի անբաժանելի մասը: Այդ արձանագրություններն ուժի մեջ են մտնում սույն Հուշագրի ուժի մեջ մտնելու համար նախատեսված կարգով:

Հոդված 15

Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրումից հետո հայկական Կողմից ուկրաինական Կողմին ուղղված՝ Հուշագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ բոլոր ներպետական ընթացակարգերը կատարելու մասին գրավոր ծանուցումն ստանալու օրվանից:

Յուրաքանչյուր Կողմ կարող է դադարեցնել սույն Հուշագրի գործողությունը այդպիսի մտադրության մասին դիվանագիտական ուղիներով մյուս Կողմին ծանուցելու օրվանից վեց ամիս հետո:

Ստորագրված է Երևան քաղաքում 2009 թվականի հոկտեմբերի 16-ին, երկու բնօրինակով՝ ուկրաիներեն, հայերեն և անգլերեն: Բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Սույն Հուշագրի դրույթների մեկնաբանման ընթացքում տարաձայնություններ առաջանալու դեպքում կգերակայի անգլերեն տեքստը:

Հուշագիրն ուժի մեջ է մտել 2009թ. դեկտեմբերի 10-ին